

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՐԱԿՅԱՆԻ ԼԵԳԵՆԴՆԵՐԻ ՈՒ ՋՐՈՒՅՑՆԵՐԻ ԽՈՐԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՍՄԻԿ ՎԱՆՅԱՆ

Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունը արևելյան ու արևմտյան փիլիսոփայական ուղղությունների մի բարդ համադրություն է: Իր մտավոր ու ստեղծագործական պրպտումներով թափանցելով համաշխարհային մտքի և ոգու տիրույթները՝ գրողը ոչ թե կորցրել է իր անհատականությունը, այլ գտել իրեն: Այս իմաստով ուշագրավ է Ավ. Իսահակյանի խոստովանությունը Աղավնիի հետ զրույցներից մեկի ընթացքում. «Ես երկար ժամանակ եղել եմ միջշեականության ազդեցության տակ, դա ճիշտ է: Եղել եմ նաև տոլստոյական, բայց նրանց միջոցով ես հասել եմ ինքս ինձ: Ես շատ շնորհակալ եմ Տոլստոյից, Շոպենհաուերից, Բուդդայից, որոնք ինձ շատ բան սովորեցրին: Ես շնորհակալ եմ նրանցից և գլուխս խոնարհում եմ նրանց մեծության առաջ, բայց ես, թեև փոքր, մնացել եմ ես»¹:

Արևելքը և Արևմուտքը յուրովի ներհյուսվել են Իսահակյանի ստեղծագործության մեջ: Այդ կապակցությամբ Ս. Սարինյանը գրում է. «Դեռ վաղ հասակում նրա դեգերող միտքը թափառեց արևելքի և արևմուտքի փիլիսոփայության ոլորտներում, փորձեց որոնել գոյության տիեզերական խորհուրդը, ըմբռնել պատճառի սկիզբը, քննել շարժման, ժամանակի ու տարածության հարաբերական անսահմանությունը: Աշխարհի հավիտենական նորոգության հին հնդկական պատկերացումները, գերմանական փիլիսոփաների ուրույն տրանսֆորմացիաներով, շատ բան տվին Իսահակյանի գեղարվեստական մտածողությանը...»²:

Եթե արևմտաեվրոպական մշակույթի մեջ Իսահակյանին առաջին հերթին գրավում էին գիտական-փիլիսոփայական մտքի ձեռքբերումները, ապա արևելյան մշակույթի մեջ՝ կրոնական ուսմունքները, բանահյուսությունն ու պոեզիան: «Ես պիտի օգտվեմ գլխավորապես Հին Ասիայի կրոններից, էպոսներից ու պոեզիայից: Եվ նոր աշխարհի, Եվրոպայի միայն գիտություններից»³, - կարդում ենք 1895 թվականի հիշատակարանային գրառման մեջ: Արևելյան ընդհանուր աշխարհայեցողության մեջ գերիշխող դեր ու նշանակություն ունի բուդդայական ուսմունքը, որի առանձին դրույթներ գեղարվեստական ընդհանրացման են հասել Ավ. Իսահակյանի «Բուդդիան» (1908), «Բուդդիան թռչուն» (1925) լեգենդներում, «Երջանկության իմաստը» (1910) արձակ պոեմում, «Ուշինարա» (1923) զրույցում⁴:

¹ Աղավնի, Նրա մտերմական աշխարհում, Եր., 1975, էջ 78:

² Ս. Սարինյան, Գեղարվեստական գրականության պատմականությունը, Եր., 1979, էջ 132:

³ Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Եր., 1977, էջ 171:

⁴ Ավ. Իսահակյանի գեղարվեստական արձակումն նկատելի է ժանրային ոչ հստակ դասակարգում, մասնավորապես՝ «Ուշինարան» չորսհատորյակում (1958-1959) գետեղվել է արձակ պոեմների մեջ, իսկ վեցհատորյակում (1973-1979)՝ լեգենդների և զրույցների մեջ:

Բուդդայականությունը, ինչպես հայտնի է, կրոնափիլիսոփայական ուսմունք է (մ. թ. ա. VI-V դդ.), որը մարդու կատարելագործման ուղին տեսնում է իր առաջադրած «Չորս բյուրեղ ճշմարտությունների» մեջ.

1. կյանքը տառապանք է,
2. տառապանքի աղբյուրներն են ցանկություններն ու կրքերը,
3. տառապանքի վերացմանը կարելի է հասնել ցանկությունների և կրքերի հաղթահարմամբ,
4. դրանց հաղթահարման միջոցը «Ութստեղյան ճշմարտություններն» են:

Բուդդայական կրոնական համակարգում իրենց որոշակի դերն ունեն Սանսարայի (հոգեփոխություն), Կարմայի (գործողություն, հատուցում) օրենքները:

Այս ուսմունքի բարձրակետը Նիրվանան (հանգստացում, հանգում, մարում) է, մարդու հոգու այն երանելի վիճակը, երբ նա ազատվում է երկրային բոլոր կապերից, կրքերից ու ցանկություններից, տեղի է ունենում անհատական գոյի միացումը աստվածային բացարձակ գոյին:

Կերպարանափոխության՝ Սանսարայի դրույթն արտահայտվել է Իսահակյանի «Ուշինարա», «Բուդդիան թռչուն» ստեղծագործություններում, որոնց հիմքում ընկած է զոհաբերությունը:

«Ուշինարա» հնդկական զրույցում հանուն բարոյական պարտքի իրագործվող անձնագոհության գաղափարն իր ակունքներով շատ հին է (մ. թ. ա. II հազ.), ծագել է հին հնդկական վեդաներից (գիտելիք, իմացություն): «Վեդաներում,- գրում է Ջ. Ավետիսյանը,- աստվածները շարունակ կերպարանափոխվում են (անտրոպոմորֆիկա)՝ մարմնավորելով բնության ու մարդու ներաշխարհի ֆունկցիաները: ...Հիմնական գաղափարը սրանցում այն է, որ մարդը աստվածայինը կարող է ընդունել միայն զոհաբերության միջոցով: Մարդը զոհվում է մարդկանց համար և աստվածանում: Սա հավերժական պայքարն է չարի դեմ (վրիթա) և բարության հաղթանակը»⁵:

Հնդկական սկզբնաղբյուրներում Ուշինարան Բրահմա, Վիշնու, Շիվա երրորդության աստվածներից մեկի՝ Շիվայի (ավերիչ ուժի անձնավորում) որդին է: Իսահակյանի զրույցում նա արդարամիտ դատավոր է, որն աստվածների կողմից ենթարկվում է փորձության: Ամպրոպի աստված Ինդրայի և Սրբազան հուրն անձնավորող Ագնիի միջոցով քննության է առնվում բարոյական պարտքին Ուշինարայի նվիրվածությունը, որը հաստատվում է նրա անմնացորդ գոհողության գնով.

«-Ես Ինդրան եմ,- ձայնեց անզղը,- տիեզերքի իշխանը, և աղավնին - հուր Ագնիի ոգին:

Մենք եկանք քո առաքինությունը փորձելու համար:

Հավիտենական փառքով դու զարդարեցիր քեզ, ո՛վ Ուշինարա, որովհետև քո իսկ մարմնով խղճացիր փոքրիկ աղավնուն և քո կյանքով փրկեցիր թշվառին:

⁵ **Ջ. Ավետիսյան**, Գրական ստեղծագործության հոգեբանություն, Եր., 2011, էջ 136:

ժողովուրդների մեջ պիտի չհնանա քո անունը, ... որովհետև պարտքի սրբության հավատարիմ եղար»⁶:

«Բուդդիան թռչուն» լեգենդում անձնագոհությունն իրագործվում է հոգեփոխության միջոցով: Հավերժական Սանսարայի շրջապտույտում թռչունի կերպարանք առած Բուդդան իրեն նետեց խարույկի մեջ՝ ապրելու կամեցողությամբ տառապող մարդուն փրկելու, սովահար մանկանն իր մտով կերակրելու. «Եվ երբ երեխան ուտում էր խորոված միսը, թռչունի հոգին գնաց և մարմնացավ Սիթհարթայի մեջ, որը դարձավ մարդածն Բուդդիան՝ կատարյալ և իմաստուն լույսը՝ ավետելու աշխարհին չորս սրբազան ճշմարտությունները - փրկելու համար մարդուն ծնվելու, ծերանալու և մեռնելու անհրաժեշտության տանջանքներից և հասնելու համար բացարձակ երանությանը - Նիրվանային» (հ. 3, էջ 226):

«Բուդդիան» լեգենդում մարդու փրկության՝ բուդդայական ուսմունքի կողմից նախանշված ուղիների (Չորս մեծ ճշմարտություններ, Ութսուեղյան ճշմարտություններ, Տասը շղթաներ, Կարմայի օրենք) համապատկերում արտահայտվել է Բուդդայի մեծ կարեկցանքը, որը, նրա արդար ցասունը ճեղքելով, վերահաստատվեց՝ մշտանորոգ կյանքին ի տես. «Ես, որ խղճում էի իմ ափում բույն դրած, այնտեղ ծնած և սնած այս արարածներին, մի՞թե մեր երկիրն էլ այդպիսի մի թռչնի բույն չէ Անսկիզբն Անմահի աստվածային անսահման ափի մեջ: ... Չէ՞ որ Անսկիզբն էլ իր մեծ գերտիեզերական սիրով և գթով խղճում է մարդկանց և արարածներին ու տեսնելով և ներելով նրանց հանցանքները՝ փրկության պատգամն է ուղարկում նրանց՝ երանական Նիրվանայի ուղին...» (հ. 3, էջ 143):

«Երջանկության իմաստը» արձակ պոեմում բուդդայականության, մասնավորապես Նիրվանայի հետ է առնչվում եգիպտական հինավուրց Սֆինքսի հղած առեղծվածային պատգամը. «Ո՛վ մարդ, արյունի ծնունդ և կրքի ծարավ, քո անմիտ ոգին անհազ տարփում է հավերժ գրգիռի: Երջանկության իմաստը դու անկարող ես ըմբռնել, քո զգացող գոյությունը չարժե իր ձգտումին, և ոչ մի նպատակ չարժե, որ նրան ըղձաս: ...Գնա՛ և պատգամիր աշխարհին հանուր՝ հարավին, նույնպես հյուսիսին, արևելքին, նույնպես արևմուտքին, երջանկության իմաստը - չպետք է զգալ, չպետք է խորհել, չպետք է կամենալ, այլ միայն քարանա՛լ, քարանա՛լ, քարանա՛լ...» (հ. 3, էջ 45):

Սֆինքսի ներկայացրած հոգեկան գործողությունների այս շղթան տանում է դեպի Նիրվանա, դեպի հավերժական հանգիստը՝ մարդկային հոգու այն բարձրագույն վիճակը, երբ մարդը, իր մեջ մարելով անհատական կամքը, հանձնվում է տիեզերական կամքին:

«Ջարգանալ մինչև Նիրվանա, ու սուզվել այնտեղ - սուզվել ճշմարտության, աստվածության մեջ. Նիրվանան լոկ ճշմարտությունն է և ամենի վերջը... Նա տիեզերքի երազն է, կյանքն է, հիացմունքն է - մենք անասուն ենք եղել, այժմ կիսանասուն մարդ ենք, պիտի դառնանք հաստատ մարդ, հետո մարդ-աստված, հետո միայն աստված... և Նիրվանայում հանգ-

⁶ Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, 6 հատորով, հ. 3, Եր., 1975, էջ 220 (Իսահակյանի վեցհատորյակից մյուս մեջբերումների հատորը և էջը այսուհետև կնշվեն տեղում):

չենք...»⁷, - դեռևս 1894 թվականին գրում է Իսահակյանը «Հիշատակարանում»:

1890-ական թվականներին լինելով գերմանական մշակույթի նշանավոր կենտրոն Լայպցիգի համալսարանի գրական և փիլիսոփայական բաժանմունքների ազատ ունկնդիր՝ «իր կյանքի շենքից» ճշմարտություն տենչացող Իսահակյանը լսում է գերմանացի հայտնի գիտնականների դասախոսությունները: Կարդում է Գյոթե, Չայնե, Շիլլեր, ուսումնասիրում Մարքսի և Էնգելսի սոցիալական ուսմունքը, բուդդայական, քրիստոնեական ու իսլամական կրոնները, փիլիսոփայական տարբեր ուղղությունների ներկայացուցիչներին՝ Պլատոն, Կանտ, Չեգել, Շտիրներ, Ֆոյերբախ, Շոպենհաուեր, Նիցշե և այլք:

Պլատոնի առաջադրած իդեալիզմի գլխավոր դրույթներից է հոգու տեղափոխության ու վերաբնակեցման գաղափարը, որի համաձայն՝ ողջերը ծնվում են ոչ այլ կերպ, քան մահացածներից, նրանց չմահացող հոգիներից: Ըստ այդմ՝ հոգին անմահ է, չտարրալուծվող, մարմինը՝ մահկանացու, քայքայվող: «Ֆեդոն» կամ «Վասն անմահութեան հոգւոյն» երկում մահը բնութագրելով որպես «հոգուց բաժանված մարմնի ըստ ինքյան առանձին գոյություն և մարմնից բաժանված հոգու ըստ ինքյան առանձին գոյություն»⁸, Պլատոնն այն համարել է բարիք՝ դիտելով որպես հոգու տեղափոխություն:

«Հավերժություն» (1919) արձակ պոեմի հիմքում դրված է պլատոնական սիրո գաղափարը: Երբ իրենց բնույթով երկսեռ տիտաններին հզորությունից զրկելու նպատակով Ջևար նրանց արական կեսն առանձնացրեց իգական կեսից, այդ կեսերն սկսեցին որոնել իրար՝ ներդաշնակ ամբողջություն կազմելու համար. «... Տարերային ահեղ ուժերը մեզ կիսեցին, բաժանեցին առժամանակ, որ անթիվ դարերից հետո անպարտելի կարոտով բռնկված՝ նորից գտնեինք իրար:

-Այո՛, հոգիս, սիրել նշանակում է՝ գտնել իրար...» (հ. 3, էջ 57):

Իսահակյանի արձակ պոեմում սերը գործում է հոգու անմահության տիրություն. այն ոչ թե հարափոփոխ երևույթ է մասնավոր ժամանակի և տարածության հոլովություն, այլ կայուն էություն՝ հավերժական անսահմանության մեջ:

Փոփոխական են երկու սիրող կեսերի հանդիպման վայրն ու ժամանակը, նրանց մարմին առած ձևերը՝ անձնավորումները: Մերթ հյուլե են նրանք աշխարհաստեղծման քաոսի մեջ, դեռափթիթ աղջիկ ու հովիվ՝ Հիմալայի գրկում՝ չքնաղ Քաշմիրի հովտում, մերթ ոսկեբաշ առյուծ՝ Լիբիական կիզող անապատում, երկու քնքուշ շուշան՝ Բենարեսի շքեղ հովտում՝ Գանգա գետի ափին, մերթ որսորդ ու եղնիկ՝ Լեռների վրա կամ անվեհեր մի վիկինգ ու ոսկեհեր մի աղջիկ՝ Ալբիոնի եզերքին...

Անփոփոխ են միայն հոգին ու սերը. «...Յուրաքանչյուր մեր անձնավորումի ժամանակ, որքան էլ որ փոխված էին լինում դարն ու վայրը և թե մեր հոգու մարմին առած ձևերը, բայց և այնպես մենք իսկույն անվրեպ ճանաչում էինք իրար, մեր հայացքների մեջ խոսող **հոգին** (ընդգծ՝. Յ. Վ.)

⁷ Ավ. Իսահակյան, Հիշատակարան, էջ 77:

⁸ Պլատոն, Երկեր, հ. 1, եր., 2006, էջ 68:

բնավ չէր փոխվում: ...Մեր սերն ինքնին հավերժությունն է, որ եղել է միշտ, որ կա և կլինի միշտ ...Մահը մեզ համար ժամանակավոր միտ է եղել և հանգիստ միայն...» (հ. 3, էջ 61, 64):

Ավ. Իսահակյանի «Շիդհարը» (1907) լեզբենդուն գործում է Յեզելի դիալեկտիկական զարգացման օրենքը, որն այստեղ ընդգրկում է մասնավոր ժամանակի և տարածության մեջ գտնվող մարդկանց, իրերն ու երևույթները: Դարերի հերթագայմանը զուգընթաց՝ վաղեմի ծանոթ ծովը փոխարկվում է ծարավուտ ու տատասկոտ մի անապատի, անապատը՝ մի մարդաշատ քաղաքի, քաղաքը՝ ծաղկավետ ու գարնանագեղ մի դաշտավայրի:

Այդ շրջապատույտից դուրս է միայն «անդուլ դարերի թափառականը»՝ հավերժական ժամանակի կրող Շիդհարը, և իր հոգու խորքում դառնագին խորհում է իրերի հարահոս ընթացքին անգիտակից մարդկանց ակնթարթային կյանքի մասին. «Այն թռչող վայրկյանը, որ մարդիկ կյանք են անվանում, հավերժական է թվում այս խեղճերին: ... Սակայն ո՛վ փրկարար պատրանք ... Իրենց խխունջից տիեզերական օվկիանի խորհուրդներն են լուծում և օրենքներ սահմանում անհունին և անսահմանին... Երեկը նրանց համար գոյություն չունի, այսօրն է նրանց համար միակ իրականը... Երգում են և պարում և չգիտեն, որ իրենց ոտների տակի երեկվա գերեզմանը վաղը իրենց գերեզմանն է լինելու...» (հ. 3, էջ 121, 122):

Ելակետ ունենալով Յեզելի փիլիսոփայությունը՝ Մաքս Շտիրները հանգեց անիշխանականության, սուբյեկտիվ իդեալիստական հայեցակետի, ըստ որի՝ միակ իրականը «Ես»-ն է, իսկ ամբողջ աշխարհը՝ այդ «Ես»-ի սեփականությունը: Շտիրների փիլիսոփայության մեջ լիակատար կերպով դրսևորվեց անհատապաշտությունը, որի հիմնական դրույթը անհատի ինքնավարության և նրա բացարձակ իրավունքների ընդունումն է. «Իմ գործը ո՛չ աստվածային է, ո՛չ մարդկային: Այն ո՛չ ճշմարիտ է, ո՛չ լավ, ո՛չ արդար, ո՛չ ազատ, այն իմն է և այն ընդհանուր չէ, այլ միակ է, ինչպես միակ է և եսը: Ինձանից վեր ոչինչ չկա»⁹:

Շտիրների փիլիսոփայության որոշ տարրեր նկատելի են Ավ. Իսահակյանի «Չինգիզ-խանը» (1907), «Անանդան և մահը» (1908) լեզբենդներում:

«Իմ ոգին խորհում է, ուրեմն ես կամ, ես ապրում եմ, և որովհետև ես կամ, ուրեմն կա և տիեզերքը, եթե ես կամ և կա տիեզերքը, ապա ուրեմն չկա մահը»,- Անանդայի շուրթերով արտահայտված այս գաղափարը սերտորեն առնչվում է սուբյեկտիվ իդեալիստական փիլիսոփայությանը, որտեղ օբյեկտիվ աշխարհն ածանցվում է սուբյեկտից, նրա ապրումներից ու զգացողություններից:

Ժամանակի և տարածության միահեծան տիրակալ մահը Իսահակյանի «Անանդան և մահը» լեզբենդի գեղարվեստական տիրույթում սոսկ երևույթ է, որն ածանցվում է գերակա «Ես»-ից՝ մշտագո էությունից, ուստի՝ մահն անգոր է ոչնչացնելու իր «Ես»-ը. «Եվ որովհետև ես եմ ստեղծել ժամանակ - տարածությունը, իմ ոգու դրսևորումն է նա և իմ կամքի ու մտքի առարկայացումը - ապա ուրեմն ես հզոր եմ մահից, ու անմահ է իմ եսը: ... Անմահ եմ ես, որովհետև մահը չի կարող անէացնել իմ ես-ը՝ ժամանակ -

⁹ Штирнер М. Единственный и его собственность. М., 1918, с. 22.

տարածությունը: Ես եմ իրը մշտագո, հավերժ ու անփոփոխ, իսկ մահը՝ երևույթ միայն» (հ. 3, էջ 155):

Ի տարբերություն Անանդայի, որը ձգտում էր մահը հաղթահարել իր անհատական «Ես»-ի, ոգու զորությամբ, Չինգիզ խանը փորձում է մահվանը դիմակայել բռնի ուժով՝ զենք ու զորքով: Սահվան հանդեպ խանի անկարողությունից էլ ծնվում է նրա վերջին ցանկությունը, որը ինդիվիդուալիստական փիլիսոփայության դրույթներից մեկի՝ բացարձակ էգոիզմի արտահայտություն է.

«- Վեզի՛ր, հրամայում եմ՝ իմ պետության բոլոր աղբյուրներն ու գետերը, ծովերն ու օվկիանոսները թունավորեցե՛ք, որ ինձ հետ մեռնեն ամենքը, ամենքը...» (հ. 3, էջ 134):

Ավ. Իսահակյանի աշխարհայացքի ձևավորման ու կայացման գործում բացառիկ նշանակություն ունեն գերմանական և ընդհանրապես համաշխարհային մտքի խոշոր ներկայացուցիչներ Ա. Շոպենհաուերն ու Ֆ. Նիցշեն: «Երիտասարդության տարիներին տարբեր փիլիսոփայական սիստեմներով շատ եմ տարվել,- 1938 թ. մարտի 30-ին խոստովանել է Իսահակյանը,- պեսիմիզմ, անարիստիզմ: Հափշտակվել եմ Բուդդայով, Շոպենհաուերով, մանավանդ Նիցշեով... Դեռ ճեմարանում կարդում էի Շոպենհաուեր: Գերմանիայում առաջին գիրքը, որ ձեռք բերի, Շոպենհաուերի «Աշխարհը որպես կամք և պատկերացում» երկն էր: Պեսիմիզմն առաջ էլ կար իմ մեջ, բայց Շոպենհաուերը հունավորեց, թերփաներ տվեց»¹⁰:

Շոպենհաուերի տեսության սկզբունքներից մեկի համաձայն՝ կյանքը գոյության համար մղվող անողոք պայքար է, ուր մարդն ի սկզբանե պարտված է, գոյությունն էլ լոկ մի տանջանք է, որովհետև մարդն իր ճակատագրի տերը չէ: Իսահակյանը յուրովի արձագանքել է այս դրույթին գլխավորապես «Ի՞նչ ես գազազում, իմ վիրավոր սիրտ» բանաստեղծության մեջ, «Բուդդիան թռչուն» լեզենդում, «Ո՞վ է ապրում» գրույցում:

Հիմնվելով Շոպենհաուերի փիլիսոփայության, հատկապես կամքի մասին ուսմունքի վրա՝ Նիցշեն ստեղծեց «Այսպես խոսեց Ջրադաշտը» (1883-1885) երկը, որի չորս գլխավոր մոտիվներից մեկը կամք առ իշխանությունն է: Ըստ այդ սկզբունքի՝ իշխանությունը և ուժը ագրեսիա չեն, այլ պոտենցիա (ունակություն), «չարից և բարուց անդին», բացարձակ ու բնական երևույթներ, որոնք դրսևորվելով, արժեքներ են ստեղծում: Գերմարդու տեսությունը մշակելիս Նիցշեն առաջնությունը տվեց ոչ թե Շոպենհաուերի այն դրույթին, ըստ որի՝ գոյության կռվում պարտվում են բոլորը, այլ Դարվինի ուսմունքին, որի համաձայն՝ բնության մեջ ուժեղը հաղթում է: Նիցշեի գերմարդն էլ իշխանությամբ օժտված հզոր անհատ է, որը պիտի ստեղծեր ուժեղ ու կատարյալ մարդկանց հասարակություն:

Անհերքելի են Նիցշեի ուսմունքի որոշակի տարրերը Ավ. Իսահակյանի ոչ միայն քնարերգության մեջ, այլև «Արծվամանուկ» (1905), «Լեռների հսկան» (1907) լեզենդներում և «Ձեր խնդրածը իմ ոտների տակն է» (1909) գրույցում:

¹⁰ Ա. Ինճիկյան, Ավետիք Իսահակյան, Եր., 1977, էջ 228, 229:

Թե՛ արծվամանուկը, և թե՛ լեռների հսկան գերմարդու հատկանիշներով օժտված կերպարներ են, միայնակ անհատներ՝ ազատ և հզոր, «ինչպես արևը Ջորոաստրի լագուր երկնքում»: Իսահակյանի հերոսը «...տխուր էր միշտ և մռայլ այն մորկային ամպերի պես. նրա հոգում ամպրոպ կար՝ փոթորիկ և կայծակ դարբնող ... Նա պայթել էր ուզում...» (հ. 3, էջ 101):

Հիշենք և Նիցշեի գերմարդու բնութագիրը. «Տեսե՛ք, ես ավետաբերն եմ կայծակի և ամպից ընկնող ծանր կաթիլ,- իսկ այդ կայծակը կոչվում է գերմարդ... կայծակը մարդ մթին ամպից»¹¹:

Այսուհանդերձ, տարբեր են Նիցշեի և Իսահակյանի հերոսների նկրտումները: Իսահակյանի՝ ազգային իդեալների դիտանկյունից վերաիմաստավորված կերպարները ձգտում են հաստատել արդարություն, ազատություն և սոցիալական հավասարություն, որը, ինչպես գիտենք, հակադիր է մարդկանց անհավասարության նիցշեական սկզբունքին:

Նիցշեի տեսության առավել հարազատ արտահայտությունը «Ձեր խնդրածը իմ ոտների տակն է» գրույցն է: «Այստեղ խնդիրը չի վերաբերում սոսկ Նիցշեից արված ուղղակի քաղվածքին՝ «Մեծ Ջրադաշտն ասել է. «Ճշմարիտը խոսիր այս աշխարհում հզորների առջև»: Թեև այս մեջբերումը բացատրում է Մուսա-Շիր-Ալու վարքագիծը, բայց պատմվածքի բուն փիլիսոփայությունը,- հատկանշում է Ժ. Քալանթարյանը,- ենթատեքստում է և արտահայտվում է այլաբանորեն»¹²:

Նիցշեի Ջրադաշտը քարոզում էր. «Ես ձեզ թախանձում եմ, իմ եղբայրներ, հավատարի՛մ մնացեք երկրին և մի՛ հավատացեք նրանց, ովքեր ձեզ հետ վերերկրային հույսերից են խոսում: Թույն կաթեցնողներ են դրանք,- գիտեն դա, թե ոչ»¹³:

Ջրադաշտի պես երկրային կյանքի արժևորման պատգամն է բերում նաև Իսահակյանի հերոսը՝ մատնանշելով իր ոտքի տակ ընկած ոսկե դրամը. «- Ո՛վ մոլլա, ո՛վ մարդիկ, դուք ինչ որ խնդրում եք աստծուց - ահա՛ այստեղ է, ճշմարիտն եմ ասում ձեզ - ձեր խնդրածը իմ ոտների տակն է...» (հ. 3, էջ 159):

Ամփոփելով նշենք, որ Ավետիք Իսահակյանը, այս բոլոր փիլիսոփայական ուսմունքները տարրալուծելով իր անհատական ու ստեղծագործական խառնվածքի մեջ, ենթարկելով իր «Բարձրագույն ես»-ի տնօրինությանը, ստեղծել է գեղարվեստի մնայուն արժեքներ՝ օժտված ձևի և բովանդակության ներդաշնակությամբ:

АСМИК ВАНЯН – Философский смысл легенд и сказаний Аветика Исакяна. – В статье рассматриваются некоторые элементы религиозных и философских направлений Востока и Запада (буддизм, Платонов идеализм, субъективный идеализм, индивидуализм, теории Шопенгауэра, Ницше) в легендах и сказаниях

¹¹ **Ֆր. Նիցշե**, Այսպես խոսեց Ջրադաշտը, Եր., 2008, էջ 52, 58:

¹² **Ժ. Քալանթարյան**, Անդրադարձներ, Եր., 2003, էջ 21:

¹³ **Ֆր. Նիցշե**, նշվ. աշխ., էջ 48:

Ав. Исаакяна. По-своему осмысливая эти философские учения, писатель создал гармоничные по форме и содержанию произведения.

HASMIK VANYAN – *Philosophical Meaning of Avetiq Isahakyan's Legends and Tales*. – The application of certain elements in eastern and western religious and philosophical directions in Isahakyan's legends and tales (Buddhism, Plato's idealism, subjective idealism, individualism, theories of Schopenhauer and Nietzsche) are examined in this article. Avetiq Isahakyan, individually comprehending all these philosophical studies, created eternal values in harmony with style and content.